ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՆՏԱՌԱՄՈՒՏԻ

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն
Անտառամուտ համայնք, հասցե,
Հեռախոս 0322/ 6-90-88

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա. Նալբանդյանին

թիվ 71
Դեկտեմբեր 2013

Անտառամուտի գյուղապետարանից ներկայացնում ենք համայնքի ավագանու 03 Դեկտեմբերի 2013 թվականի որոշումները թիվ 31Ա, 32Ն, 33Ն և 34Ա

Անտառամուտ համայնքի ղեկավար Մ.Հակոբարձումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Անտառամուտ համայնք
հեռ. 0322/6-90-88

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 31ա

Անտառամուտ համայնքի ավագանու 2013 թվականի Դեկտեմբերի 3-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով

Ավագանին վորոշում է

Հաստատել Անտառամուտ համայնքի ավագանու 2013 թ-ի Դեկտեմբերի 3-ի նիստի օրակարգը՝

Օրակարգում

1. 2013թ-ի բյուջեում հոդվածային փոփոխություններ կատարելու մասին
2. 2014թ-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին
3. Գույքագրման ցուցակների հաստատում

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Ս. Ոսկանյան			
Ս. Հարությունյան			
Ա. Ավետիքյան			
Թ. Մնացականյան			

Անտառամուտ համայնքի ղեկավար Մ.Համբարձումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Անտառամուտ համայնք
հեռ. 0322/6-90-88

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 32 Ն

Անտառամուտ համայնքի 2013 թվականի փոփոխված բյուջեն հաստատելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով 3-րդ մասով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 35-րդ մասով

Ավագանին որոշում է

Հաստատել Անտառամուտ համայնքի 2013 թվականի բյուջեի փոփոխությունները՝

1.եկամուտների գծով

ընդամենը՝ 5429,3

այդ թվում

վարչական բյուջեի մասով-5429,3

ֆոնդային բյուջեի մասով-25,0

2. Ծախսերի մասով

Ընդամենը-5442,1

այդ թվում

Վարչական բյուջեի մասով-5429,3

ֆոնդային բյուջեի մասով-37,8

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Ս. Հարությունյան			
Ս.Ոսկանյան			
Ա. Ավետիսյան			
Բ. Մնացականյան			

Անտառամուտ համայնքի ղեկավար՝ Մ.Համբարձումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
[illegible] ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2013 թ. N 33 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի գյուղական համայնքում 2014 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
[illegible]	[illegible]		
[illegible]	[illegible]		
[illegible]	[illegible]		
Հարությունյան [illegible]	[illegible]		

Համայնքի ղեկավար՝ [illegible] Ա. Հարությունյան

2013թ. դեկտեմբերի 03

գ. [illegible]

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
գյուղական համայնքի ավագանու
2013 թ. դեկտեմբերի 3-ի թիվ 33-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ Տեղական գՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտներիհամար՝ տասա հազար դրամ.

բ. սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսան հազար դրամ.

501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քառասուն հազար դրամ.

1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ վաթսունհինգ հազար դրամ.

3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

երեք հազար դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

հինգ հազար դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝

երեք հազար դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

հինգ հազար դրամ.

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ վեց հազար դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ վեց հազար դրամ.

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ մեկ հարյուր հիսուն դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝_____ _____դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ մեկ հարյուր հազար դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ _____դրամ.

5)Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածած առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական

հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ _____դրամ.

6)Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ _____դրամ.

6.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ վեց տասն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երեք հարյուր հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ դրամ:

Հայաստանի Հանրապետության հմայանքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ _____դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝_____ դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ հինգ հազար դրամ:

12. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և կարգավորման տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ հինգ հազար դրամ:

13. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել՝ հինգ հազար դրամ:

Համայնքի ղեկավար

----- դեկտեմբերի 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Անտառամուտ համայնք
հեռ. 0322/6-90-88

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 34

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ մասով

Ավագանին որոշում է

Հաստատել համայնքի գույքագրման փաստաթղթերը համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
Ս. Հարությունյան			
Ս.Ոսկանյան			
Ա. Ավետիքյան			
Թ. Մնացականյան			

Անտառամուտ համայնքի ղեկավար Մ.Համբարձումյան